Երիտասարդ աբեղան տարաւ մեզ մի բաւական մաքուր եւ ճաշակով կահաւորուած սենեակ եւ իսկոյն սկսեց մեզ հետ խիստ մտերմական խօսակցութիւն, թէ որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր պիտի գնանք, արդեօք պարոն բժշկապետը երկա՞ր պիտի մնայ Վանում, ի՞նչ ազգից է պարոն բժշկապետը, քանի՞ լեզու գիտէ եւ այլն: Այդ բոլոր հարցմունքները այն աստիճան անկեղծ էին, որ Ասլանը առանց ձանձրանալու պատասխանում էր նրան:

— Շա՞տ ժամանակ է, որ Հայրիկը այդ վանքի վանահայրն է, — հարցրեց Ասլանը:

— Շատ ժամանակ չէ, — պատասխանեց աբեղան, — բայց այդ փոքր ժամանակում նա այնքան գործ կտարեց, որ մի ուրիշը որքան եւ մեծ ջանք ու եռանդ ունենար, հազիւ թէ տասն, քսան տարիների ընթացքում կարող կը լինէր կատարել:

Երիտասարդ աբեղան Հայրիկի աշակերտներից էր: Ես իսկոյն նկատեցի, եւ այնուհետեւ ինձ շատ անգամ էր պատահել նկատել, որ նրա աշակերտները նրա մասին խօսելիս՝ նրանց տիրում էր խորին ոգեւորութիւն, եւ նրանք մի առանձին պարծանքով էին յիշում այն մարդու անունը, որին այնքան սիրում էին, որին այնքան պատւում էին:

— Հայրիկից առաջ, — շարունակեց նա, — այդ վանքը համարեայ թէ աւերակ էր. ոչ դպրոց կար, ոչ՝ աշակերտ եւ ոչ՝ կանոնաւոր տնտեսութիւն: Նրա եկամուտները կողոպտւում էին թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին աւազակներից: Վանքը պարտքերի ներքոյ խեղդւում էր: Մինչեւ անգամ ս. Նշանը գրաւ էր դրուած թուրք վաշխառուների մօտ: Բայց Հայրիկը կեանք տոեց այդ վանքին: Բոլորը, ինչ որ տեսաք եւ ինչ որ պիտի տեսնէք, նրա աշխատութեան պտուղն է: Բայց փոխարէնը, ինչ որ ստացաւ նա եւ ինչ որ ստանում է, — միշտ եղել է ատելութիւն, հալածանք եւ դաւադրութիւն իր խաւարասէր թշնամիների կողմից...

Վերջին խօսքը արտասանելու միջոցին երիտասարդի ձայնը դողաց: Նա պատմեց մի ցաւալի անցք, որ պատահել էր հէնց նոյն օրերում: Հայրիկը Վարագայ վանքից, որպէս նրա սովորութիւնն էր, միայնակ, ոտքով Վան քաղաքը գնալու ժամանակ, ճանապարհին հանդիպում է նրան մի քուր: Երբ Հայրիկը իր արծոի հայեացքով նայում է նրա երեսին, աւազակը շփոթւում է, նրա ձեռքերը սկսում են դողալ:

— Ինչո՞ւ շփոթեցար, բարեկամ, — հարցնում է Հայրիկը իր սովորական մեղմ ժպիտով: